տան մէջ մի գարշելի, ապականած օդ։ Բաւական չէ այս, մեր տղայոց ուսումնարանի մի մասը այնքան հնացել է և այն աստիճան խախուտ դրութեան է հասել, որ մի օր կարող է ըրլալ և թաղել իր աւերակների տակ թէ աշակերտներին և թէ ուսուցիչներին....

Զարմանալի բան. Ախալքալաքի հասարակութիւնը բաւականին զգացել է ուսման ձգտելը. ծախսում է բաւականին մեծ գումար. Թիֆլիսից տեսուչ և ուսուցիչներ է հրաւիրում. սոցա ռոճիկները մինչև հազարներ բարձրացնում, բայց այն հասարակ բանը չէ մտածում, որ, մի և նոյն ժամանակ, հարկաւոր է և ուսումնարանին յարմարաւոր շինութիւն ունենալ, օրպէս զի ծախսած փողը զուր տեղ չը կորչի և խեղճ, անմեղ մանուկները յափտենական հիւանդութեան չը դատապարտուին....

Նոյնը կարող ենք ասել և միւս գաւառների մասին։ Ցիրուցան զարմանալի երևոյթ. մեր գաւառների հայ ժողովուրդը բաւական ախտում է ուսումնարաններ բարւոքելու համար, ծախսում է առատ գումարներ, բայց դեռ չէ հասկացել, որ բաւական չէ ուշադրութիւն դարձնել միմիայն երեխայոց մտաւոր զարգացման վրա, որ հարկաւոր է և ուսումնարանի առողջապահական կանոնները խստիւ պահպանել...

Չը գիտեմ ինչպէս է վերաբերվում այս հարցին մեր ուսումնարանական վարչութիւնը, բայց հաստատ աղբիւրներից լսվում է, որ տեղիս ուսումնարանների տեսուչը, հոգաբարձուների մինչորդութեամբ, կամենում է խնդրել հասարակութիւնից, որ այս վերջինը քաղաքային գումարից մի քանի հարիւր բուրլ յատկացնէ տղայոց ուսումնարանի շինութիւնը նորոգելու համար։ Ուզում են գիտել հասարակութեան, որովհետև ուսումնարանը չունի բոլորովին նիւթական միջոց։

Եւ ցիրուցան եթէ մեր հասարակութիւնը քաղաքային փող կը ծախսի զանազան պարտէզներ և բոտանդաններ չինելու համար, ինչու չէ կարող ծախսել ուսումնարաններ բարւոքելու համար—ուսումնարաններ, որտեղ նա ամբողջ ապագայի հիմքն է ստանում։

Լրագրումից գաղթած մեր չքաւոր ժողովուրդը կարող է մնալ առանց պարտէզների և բոտանդանների, բայց չէ կարող մնալ առանց ուսումնարանի...Մի և նոյն ժամանակ թող մեր հասարակութիւնը լաւ գիտենայ, որ բարձր իշխանութիւնը, որից կախված է քաղաքային փող ծախսելու թոյլատրութիւնը, աւելի մեծ ուշադրութեամբ թոյլ կը տայ, որ քաղաքային փողը ուսումնարանների համար ծախսվի, քան թէ զանազան պարտէզների և բոտանդանների։ Մեր այս խօսքերի հաստատութիւնը թող լինի պետական ուսումնարանների դիրեկտոր մեծ. պ. Սարելեցկու զեղծմնէութիւնը։ Այս պարոնը, տեսնելով, որ Ախալքալաքը բոլորովին զուրկ է ուսումնարանայարմար շինութիւնից, աշխատեց, որ այստեղ ուսումնարանին յարմարաւոր մի տուն շինվի և տեղիս հասարակութիւնը յանձն առաւ ծախսել այս շինութեան համար 12000 բուրլ քաղաքային գումարից։ Բարձր իշխանութիւնն էլ մեծ ուշադրութեամբ հաստատեց հասարակութեան այս վճիռը։ Ցաւանք որ Ախալքալաքի հասարակութիւնը նոյն միջոցը զործ կը դնէ տեղիս հայոց հոգևոր դպրոցների շինութիւնները նորոգելու համար։ Կրկնում ենք. Ախալքալաքի բնակիչները բոլորն էլ հայեր են, ուրեմն եթէ ընդհանուր գումարից իրանց ուսումնարանների համար փող ծախսեն, ոչինչ զրկողութիւն չի լինի։ Թող փորձի մեր հասարակութիւնը։ Թող հասարակական վճռով մի գումար յատկացնի քաղաքային փողից հոգևոր դպրոցներին, զուցէ իշխանութիւնը չը մերժէ այս վճիռը և հաստատէ....

***

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

18 մայիսի

Ձեր լրագրի 77 համարի մէջ մի անյայտ պարոն Ախալցխայից լուր տալով իր համաքաղաքացի տիրացու Վասակ Յարդանեանի մասին, բարեհաճել է մի քանի անիրիշդ զրպարտութիւններ ևս արձակել իմ անձի դէմ։ Ես մի խօսք անգամ արժան չէի համարի պատասխանելու այդ անյայտ լրատուին, բայց տպագրական խօսքի և լրագրութեան յարգը պարտաւորեցնում է ինձ սոյն երկտողը ուղարկել ձեզ, յուսալով ձեր անկողմնապահութեան վրա, որ անշուշտ կը հրատարակէք ճշմարտութիւնը վերականգնելու համար։

Նախ, որ ոչ թէ էջմիածնական Սինոդը, ինչպէս հաղորդում է պ. լրատուն, այլ Ախալցխայի հոգ. կառավարութիւնն էր յանձնել ինձ այդ քննութիւնը։ Երկրորդ՝ ես ոչ միայն մտաւոր ազգակցութիւն, ինչպէս գրում է պ. լրատուն, այլ և որ և է բարեկամական յարաբերութիւն անգամ չեմ ունեցել և չունեմ Յարդանեանց տիրացուի հետ։ Երրորդ՝ ես կատարեցի ինձ յանձնված քննութիւնը ստանալով հարկաւորված ցուցումները այնպէս, ինչպէս որ իմ պարտաւորութիւնս էր, իբրև քննիչ և ոչ թէ ոչոքի չը հարցրած, ոչինչով վերազդաժայ։ զուցէ լրատու պարոնը անշուշտ տեսած կամ լսած կը լինէր, որ բազմաթիւ մարդիկ, մի քանի օր չարունակ գալիս էին հոգևոր կառավարութեան ատեանը ցուցումներ տալու։—Մենք երբէք ցանկութիւն չունենք խոյս տալու լոյսից, ինչպէս լրատու պարոնը։ Բայց թէ ինչ հետևանք կունենայ քննութեան գործը, այդ ինձ յայտնի չէ, միայն ես վստահ եմ չը կարծել խղճիս առաջ այնպէս, ինչպէս այն տողերը կարդալու ժամանակ կարմրելու է անյայտ լրատուն։ Գործի մասին այլապէս ասելուց յետոյ, կարծում ենք բաւականաչափ պարզվում է իրողութիւնը։

Թ. Ա. Ռ. Բարսղեանց

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԻՆԴԻՑ

—

6 մայիսի

Լսելով Ցանկասանի մեր եղբայրների և քոյրերի խղճալի դրութիւնը և գիտնալով որ բարեգործութիւնը չէ նայում ոչ սեռին և ոչ հասակին, մեր մէջ հաւաքեցինք մի անանուն գումար և ահա ուղարկում ենք ձեզ, խնդրելով որ հասցնէք ուր որ հարկն է. մենք մեզ բաղդաւոր կը համարինք, եթէ քաղցածների թիւը մէկով պակասի։

Սորա հետ ուղարկեցինք և Նուիրատուաց անունները։

Մարիամ Օհանեանց 10 կ., Սոնայ Օհանեանց 10 կ., Հեղինէ Օհանեանց 5 կ., Մարայ Մխսարեանց 5 կ., Եղիսաբէթ Եաղուբեանց 1 բ., Ոմն 50 կ., Մարիամ Ղարդանեանց 50 կ., Մարիամ Աւագեանց 50 կ., Անուշ Ցէր-Ղազարեանց 20 ., Մարիամ Վասիլեանց 10 կ., Աննա Վասիլեանց 10 կ., Եղիսաբէթ Իւանովեանց 30 կ., Սոնայ Եղիազարեանց 20 կ., Յուղիկ Զաքարեանց 10 կ., Եղիսաբէթ Զուարեանց 80 կ., Եղիսաբէթ Երուսալիմեան 20 կ., Շողակաթ Մելքումեանց 15 կ., Գէորգ Էլդարեանց 40 կ., Աէջքանդր Էլդարեանց 20 կ., Վարդանուշ Իւզբաշեանց 5 կ., Նունէ Աւանեանց 60 կ., Սոնայ Աւանեանց 15 կ., Ոմն 25 կ., Եղիսաբէթ Զաքարեանց 10 կ., Նունէ Գոզալեանց 30 կ., Ընդամենը 7 բ.։

Այակերտուհիներ Մարիամեան օրիորդական դպրոցի։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳԻՐԻ

—

Թիֆլիս, 12 յունիսի

Էջմիածին պատահած ժամանակը ամենայն հայոց վեհ. Հայրապետ հանգանակեալ դրամներէն 605 բուբլի յանձնեց մեզ ի նպաստ սովելոցն վասպուրականի։

Ցանուն Վասպուրականի յանձնաժողովն ազգուտ «Մշակիդ» միջոցաւ մեր ամենախորհ՝ շնորհակալութիւն յայտնել կաղաչէ։

Նախկին ատենադպիր սովելոց նպաստող յանձնաժողովն

Ս. Ցէր-Սարգսեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԲԱՆՅԻՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

«Polit. Corresp.» լրագրի մէջ տպված է ալբանական մանաւորողի գրութեան բնագիրը, որ ուղղված է Սկուտարիի մէջ բնակվող Աւստրօ-Ունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Անգլիայի հիւպատոսներին։ Այդ գրութիւնը հետևեալ բովանդակութիւնն ունի։

Եւրոպական պետութիւնների հաւատարմատարները արևելեան հարցը վճռելու համար հաւաքվեցան Բերլինի մէջ և մի դաշնագիր հաստատեցին, որը, ինչպէս եւրոպական բոլոր ազգութիւններից, նոյնպէս և ալբանցիներից անփոփոխ և սուրբ է ճանաչված։ Բայց Թիւրքիայի և Զերնոգորիայի կառավարութիւնների մէջ կայացած դաշնագիրը Իոսոի և Գրուդի շրջանները Ռուսինիայի հետ փոփոխելու վերաբերութեամբ, տարաբաղդաբար այդ դաշնագիրը գեղծվեցաւ, ոտնակոխ անելով ազգայնութեան սկզբունքը, որ եւրոպական պետութիւնների հիմունքն է կազմում։ Մենք այլանցիներս հաստատ հաւատում ենք, որ մեր ամենասուրբ իրաւունքները ոտնակոխ անող, իր մէջ արիւնահեղ սերմեր պարունակող և այժմեան քաղաքակրթութեանը հակառակ այդ դաշնագրութիւնը Օսմանեան կառավարութիւնը ակամայ է կապել և այդ պատճառով վէճերի առարկայ չը դարձա. միջնորդ պետութիւնների համար։ Երևի պետութիւնները լաւ ծանօթ չէին Ալբանիայի ազգաբնակութեան կամքի և հայեացքների հետ, որոնք ձգտել են պաշտպանել իրանց սեփական երկրի ամբողջութիւնը, ազգային բնաւորութիւնը, որը ալբանական ժողովրդի սեփականութիւն է եղել չորս դարերի ընթացքում։ Մեր թանգագին, բայց տարաբաղդ. հայրենիք Ալբանիան, որ պատմութեան մէջ իր պատուաւոր տեղն ունի, չէ կամենում ոչ ծախված և ոչ փոխված լինել և երբէք չի համրերի օտարի իշխանութիւնը, մանաւանդ սլավոնների, որոնցից նա զանազանվում է ծագումով, լեզուով, սովորութիւններով և առանդութիւններով։ Մենք կամենում ենք միայն ալբանցիներ լինել։ Մենք ոչինչ չենք պահանջում, բացի մեր հայրենիքի ամբողջութիւնը, իսկ այդ հայրենիքը մեզ համար նոյնքան թանգագին է, որքան մի քաղաքակրթված ժողովրդի համար իր հայրենիքը։ Մենք դիմում ենք քաղաքակրթված ազգերի արդարադատ զգացմունքին, խնդրելով երևակայել մեզ սպասող վիճակը և չը թոյլ տալ, որ մեզ հետ անարդար վարվին։ Մեր ազգութեան պահպանելը եղել է և կը լինի մեր ամենասուրբ նպատակը։ Երբ Իոսի և Գրուդի նահանգները Զերնոգորիային զիջելու տխուր լուրը ստացվեցաւ, ալբանական բոլոր ցեղերը անհամեմատ միաբանութեամբ վճռեցին բոլորը մեռնել, քան թէ իրանց երկիրը Զերնոզորիային տալ։ Այդ վճռից յետոյ մի շարաթվայ ընթացքում Ալբանիայի սահմանների մօտ 10000 պատերազմողներ հաւաքվեցան, որպէս զի օտար բազմաթիւ զօրքերին թոյլ չը տան մտնել մեր երկիրը։ Մենք կրկնում ենք, որ մտադիր ենք Բերլինի դաշնագրի համեմատ վարվել և պաշտպանողական դիրք ունենալ։ Ինչպէս մենք լինք կամենում, որ օտարները մեր երկիրը մտնեն, նոյնպէս էլ մենք օտարին երկիրը չենք մտնի։ Բայց որովհետև այս կախմանելի դրութիւնը երկար չէ կարող տևել, կամ այն պատճառով, որ Զերնոզորիան մեզ սպառնում է, կամ որ Ալբանիան բաւական կանացուցիչ ֆինանսական միջոցներ չունի, մենք պէտք է աշխատենք ամրացնել մեր ազգային միութիւնը։ Նկարագրելով այս բոլորը, խնդրում ենք մեր երկրում բնակվող պ. պ. հիւպատոսներին մեր այս դրութիւնը ներկայացնել իրանց կառավարութիւններին, որոնք, յոյս ունենք, այս բոլորի վրա ուշադրութիւն կը դարձնեն։ Մեր հարցի դրութեան հետ ծանօթանալուց յետոյ, թող պետութիւնները թոյլ չը տան թափել ալբանական արիւնը և հոգան, որ ալբանցիներից չը խլեն այն իրաւունքները, որոնք կատարելապէս ապահովված են ուրիշ ազգութիւնների համար։

ԲԵՐԼԻՆԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ

—

«Polit Corresp.» լրագրի Փարիզի թղթակիցը գրում է հետևեալը։

Բերլինի կոնֆերենցիան կը հաւաքվի ապանց սպասելու, որ Բ. Դուռը պատասխան տայ դեսպանների համաձայն գրութեանը։ Կոնֆերենցիան այն օգուտը կը տայ, որ Թիւրքյունական սահմանական խնդիրը այսպէս թէ այնպէս կը վճռի։ Փարիզի գերմանական դեսպան Բարոֆից նորերումս հրաւիրեց ֆրանսական կառավարութեանը մասնակցել կոնֆերենցիային։

Ֆրանսական կառավարութեան կողմից կոնֆերենցիային կը մասնակցեն Բերլինի դեսպան կոմս Սենտ-Վալիէ և ֆրանսական զբաղաւոր շտաբի գնդապետ Պերիէ, իբրև սեխնիկ-պատգամաւոր։ Թէպէտ կոնֆերենցիայի պրոգրամը սահմանափակված է Ցունաստանի սահմանների խնդրով, բայց Փարիզում երկիւղ են կրում, որ որ և է մեծ պետութեան ներկայացուցիչ ուրիշ հարցեր էլ կը բարձրացնի։ Այս դէպքում յոյս են դնում կոնֆերենցիայի նախագահ իշխան Հոհենլոհէի մարդասիրութեան վրա։ Ֆրանսիան այժմ աւելի քան թէ երբէք կամենում է պաշտպանել Ցունաստանի ցանկութիւնները Եանինայի վերաբերութեամբ։ Քանի որ անգլիական կառավարութիւնը հաւանեց Ֆրանսիայի ունեցած հայեցքները այդ գործի վրա, յոյս կայ, որ Գերմանիան և Աւստրօ-Ունգարիան չեն ընդդիմանի։ Տեխնիկական մասնաժողովը, որ կազմվելի որոշած սահմանների գիծը հաստատելու համար, իր հետ բաւականաչափ պահպանող զօրքեր կունենայ մասնաժողովի անդամների ապահովութիւնը պաշտպանելու համար։ Ասում են, որ պահպանող զօրքերը կը գրաւեն սահմանական ամբողջ գիծը։

Աւելորդ դժուարութիւններ չը ծագեցնելու համար մեծ պետութիւններից ոչ մէկը իր զօրքերը չի ուղարկի։ Իսկապէս սուլթանն էլ և Ցունաստանն էլ բաւականաչափ կանոնաւոր փորձված զօրքեր ունեն։ Եթէ Բ. Դուռը համաձայներ, կարելի էր Թիւրքայ պահպանող զօրքերին սահմանի հիւսիսային գծի վրա կանգնեցնել, իսկ յունական զօրքերին հարաւային սահմանների մօտ։ Այդպիսով տեխնիկական մասնաժողովի անդամները ոչինչ վտանգի չէին ենթարկվի։ Ֆրանսիական դեսպան Ֆիսսայի ասած ձառը, երբ սուլթանը նրան ընդունեց, իր վրա առանձին ուշադրութիւն դարձրեց։ Այդ ձառի մէջ նշանաւոր էր այն մասը, որով դեսպանը ցանկութիւն է յայտնել Ֆրանսիայի և Թիւրքիայի բարեկամութիւնը ամրացնելու մասին։ Այդ խօսքերը հանդիսացրին այն քաղաքագէտներին, որոնք երկիւղ էին կրում Թիւրքիայի վիճակի համար։ Իսկապէս Թիւրքիայի զորքերը լաւ դրութեան մէջ չեն։ Արևելեան-Ռումելիայի շարժումը վտանգաւոր է դառնում։ Բաղդադի մօտ արաբական ցեղերը ապստամբվում են, տնտեսական և վարչական դրութիւնը Երուսաղէմի, Սիրիայի և Հայաստանի մէջ հետզհետէ վատթարանում է։ Ժամանակ է նշանակել եւրոպական մի մասնաժողով և յանձնել նրան Թիւրքաց ողորմելի վարչութեան կարգի բերելը։

ԹԻՒՐՔ-ՅՈՒՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

—

«ΠΟΛΙΟΣ» լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը։

Ցունիսի 4-ին Բերլինում բացվելու է լրացուցիչ կոնֆերենցիա, որին վիճակված է վերջնական վճիռ տալ Թիւրքյունական սահմանական վէճին։ Բերլինի մեր թղթակիցը բաւական հետաքրքիր և նշանաւոր տեղեկութիւններ է հաղորդում կոնֆերենցիայի պատրաստութիւնների կարգի մասին։

Իր անդամների հաւատարմագրերը քննելուց յետոյ, կոնֆերենցիան ամենից առաջ կը վճռի, թէ ինչ մտքով պէտք է հասկանալ Բերլինի կոնգրեսի 13-դ պրոտոկոլը և Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածը։

Այնուհետև կը քննվի այն յանձնարարութիւնների բնաւորութիւնը, որոնք կը տրվին տեխնիկական մասնաժողովին։ Վերջապէս կը քննվի այդ մասնաժողովի անդամների ապահովութեան հարցը։

Մեր թղթակիցը այս վերջին հարցը բընդարձակ հարցերից, իրաւացի կերպով, ամենադժուարն է համարում։ Հարցը նրանումն է, որ ինչպէ՞ս էր մասնաժողովի ապահովութեան համար պահպան օտար զօրքեր ուղարկել, թէ Բ. Դէնից կարելի կը լինի ընտանալ յուսալի և բաւականաչափ պահպան զօրքեր, որոնց պաշտպանութեան տակ մասնաժողովը կարողանար աշխատել, առանց արգելքների հանդիպելու և առանց վախենալու տեղական մահմեդականների յարձակումներից։ Եթէ մասնաժողովի ապահովութեան համար անհրաժեշտ կը լինի եւրոպական զօրքեր ուղարկել, այն ժամանակ այդ զօրքերի ազգութեան հարցը կը բարձրանայ, իսկ այդ հարցը այնքան դժուար է, նրա մասին պետութիւնների մէջ այնպիսի անհամաձայնութիւն է տիրում, որ այդ դէպքում չենն իրագործվի ոչ տեխնիկական մասնաժողովի և ոչ կոնֆերենցիայի դիտաւորութիւնները։ Այդ հեռանքը չափազանց հաւանական է և այդ պատճառով Կ. Պոլսի մէջ եղած և Բ. Դրան վրա ազդեցութիւն ունեցող օտար պետութիւնների դեսպանները պէտք է պնդեն, որ սուլթանը տեխնիկական մասնաժողովի պաշտպանութեան համար իր զօրքերն ուղարկի։

Եթէ ենթադրենք, որ սկզբնական դժուարութիւնները այսպէս կանհետանան և որ կոնֆերենցիան առանց արգելքների պատահելու կը կատարէ իր վրա դրած պարտականութիւնները, այնուամենայնիւ դրանից յետոյ էլ թիւրքայնական սահմանական հարցը վերջնականապէս վճռված չի լինի։ Կոնֆերէնցիայի վճիռները կը ստեղծեն իրաւաբանական հիմունքներ Ռումելիայի հողային պահանջների համար։ Ռումելիան կառավարութիւնը թէպէտ կոնֆերենցիայի մէջ ձայնի իրաւունք չունի, այնուամենայնիւ բաւական կը մնայ Ռեայ կոնֆերենցիայի վճռից, որովհետև դրանից կերևայ, թէ Եւրոպան մինչև ո՞ր աստիճան իրաւացի և իրագործելի է համարում Ռումելիայի պահանջները։ Նոյնը չէ կարելի ասել Բ. Դրան մասին, որ անպատճառ կը բողոքի, հիմնվելով մահմեդականների և արքունիքների ֆանատիկոսութեան և իր անօրութեան վրա՝ զսպել ֆանատիկոսների ընդհանրութիւնը։ Այս դէպքում միայն մի ելք կը մնայ, այն է յունական զօրքերով գրաւել այն երկիրները, որոնց Բերլինի կոնֆերենցիան Ռումելիային կը տայ։

Ո՞վ կարող է զուշակել, որ այսպիսի գրաւումն նոր և բաւական ծանր դժուարութիւնների պատճառ չի դառնայ։ Ռումելիան զօրքերին անպատճառ կընդդիմանան տեղացի մահմեդականները և այդ երկու կողմերի կռիւ ժամանակ այնպիսի անցքեր կարող են պատահել, որ բացարձակ պատերազմ կը բացվի Ռումելիայի և Թիւրքիայի մէջ։ Այդպիսի պատերազմի հեռանքները դժուար է նախատեսել։ Դորձի մէջ երբէք չեղած յունական զօրքերը կը պատահեն ռումելիոյ յաղթված, բայց պատերազմի մէջ դարձնված թիւրքայ զօրքերին, որոնք լաւ յիշում են վերջին ռուս-թիւրքական պատերազմը։ Եթէ այդ պատերազմը յունայ զօրքերի համար անաջող լինի, Եւրոպան դարձեալ ստիպված կը լինի գործի մէջ խառնվել և արևելեան հարցը նոր և անսպասելի կերպարանք կը ստանայ։ Բերլինում հաւաքվող դիպլոմատները պէտք է ի նկատի ունենան այդ կարևորութիւնները և այնպիսի վճիռ տան հարցին, որ գործը չերկարի։ Այս նպատակին հասնելը հեշտ չէ, բայց կարելի է։ Բոլոր բարեմիտ եւրոպացիները ցանկանում են, որ կոնֆերենցիան աւելի լաւ հեռանքներ ունենայ, քան թէ ունեցել է Բերլինի կոնգրէսը։

Նոյն լրագրի հետևեալ համարներից մէկի մէջ տպված է։

Ռունիսի 4-ին բացվեցաւ կոնֆերենցիայի նիստը։ Իշխան Հոհենլոէ մի ճառով ողջունեց անդամներին և այնուհետև տաս զվիցան հաւատարմախոհներ։ Իշխան Հոհենլոէ միաձայն ընտրվեցաւ կոնֆերենցիայի նախագահ։

Նոյն իսկ առաջին նիստի ժամանակ կոնֆերենցիան անհրաժեշտ համարեց իր խորհուրդները դադտնի պահել։ Թէպէտ ընդհանուր հետաքրքրութիւն զարթեցնող այդ գործի գաղտնի պահելը շատ դժուար է մինչև անգամ անկարելի է, այնուամենայնիւ մենք դժուարանում ենք հասկանալ այդ գաղտնապահութեան անհրաժեշտութիւնը, մանաւանդ այն դէպքում, երբ կոնֆերենցիայի աշխատանքները առաջուց որոշված և ամենքին յայտնի են։ Բերլինի կոնգրէսի ժամանակ բոլորովին ուրիշ էր։ Այն ժամանակ կոնգրէսի անդամներից շատերը ցանկանում էին, որ իրանց ցանկութիւնները և դիտաւորութիւնները ծածկված լինէին մամուլից և հասարակութենից, որ հասարակութիւնը միայն կայացած վճիռները իմանայ։ Բաղդաւորաբար այն ժամանակվանից պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները փոխվել են դէպի լաւը։

Հիմկուց արդէն հեռաւոր հաղորդում է, թէ պետութիւնների ներկայացուցիչների համաձայնութիւն է տիրում, որ պարող է ապահովել կոնֆերենցիայի աշխատանքների արագ ընթացքը։ Նոյն իսկ կոնֆերենցիայի նշանակելը ապացուցանում է, որ հետաքրքրված բոլոր պետութիւնները համոզվելու են, թէ անհրաժեշտ է Բերլինի դաշնագրով ստեղծած գործերի անորոշ և անցողական դրութեանը վերջ դնել։

Լոնդոնից ստացված մի հեռաւոր հաղորդեց Բ. Դրան յայտարարութիւնը, թէ կոնֆերենցիայի վճիռները նրա համար պարտադրելուցից չենն կարող լինել, որովհետև հետաքրքրված կողմերը հեռացրած են կոնֆերենցիայի մասնակցութենից։ Մի ուրիշ հեռաւոր հերքեց առաջինը և Բ. Դրան յայտարարութիւնը այնպէս մեկնեց, որ թիւրքայ կառավարութիւնը պատրաստ է ենթարկվել կոնֆերենցիայի վճիռներին, բայց նա յոյս ունի, որ պետութիւնները ի նկատի կառնեն հողային գիջումների պատճառով առաջացած դժուարութիւնները։ Սրանից երևում է, որ թիւրքայ կառավարութիւնը հաւատարիմ է մնում իր հին ուղղութեանը և առաջուց խօսում է դժուարութիւնների մասին։ Անպատճառ հարկաւոր է, որ Բերլինի կոնֆերենցիայի անդամները ուշադրութիւն դարձնեն այն հարցերի վրա, որոնք կարող են առաջացնել Բ. Դրան ամենարիած դժուարութիւնները։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՑԻ

—

Վան, մայիսի 26/7 յունիսի

Նեստորական ասորիներու կաթողիկոսը (Մաքսմոն) որ կը բնակի Ֆիրիկի և Ցուխուպի լեռները և իր իշխանութեան տակ քսան հազարէն աւելի գլուխով նեստորականներ ունի, մայիս 23-ին (յունիս 4) Վան եկաւ և այժմ էր կը բնակի Այգեստան հայոց թաղի եկեղեցոյ խորհրդարանը։

Սա երիտասարդ է և իր կուրքին վրայ երկու չքանչաներ կախուած են, որոնք օսմանեան սէրութիւն տուած է։ Վանի թուրք կառավարութեան հետ, որոյ իշխանութեան տակ կը գտնուի, աղքատի տուրքերու հարիւներ ունենալով, զանոնք կարգադրել եկած է։ Ինքը չատ կոչտ և ոգէտ մարդ է։ քալել անգամ չը գիտեր կանոնաւորապէս, ոտքերն գուլպայ միայն հագած է և քալած ժամանակ այնպէս գեսին կը զարնէ ոտքերը, որ կարծես թէ կուզէ չարժել պատած տեղը։ Նեստորականներ խորամանկ մարդեր են, իրենց քաղաքականութիւնը (դիպլոմասիան) խարէութիւն է։ Թէ ռուսաց կառավարութեան և թէ անգլիացիներին պատգամաւորներ խրված են թէ մենք ձեզ անենք։ Այս ժողովուրդը ամենէն աւելի հայոց ազգին հետ բարեկամութիւն ունի և այնպէս համոզուած է թէ Եւրոպա, և մանաւորապէս Ռուսիան, կը պաշտպանեն հայերը։

Գիանի օր է որ առաջ անձրևներ եկան. վաղուց է որ ոչ մէկ տարի այսչափ անձրևային և պտղաբեր չէր եղած։ Թէև գարունին գիւղացիներ գրեթէ բնաւ ցորեն չենն ցանած, բայց աշունին ցանուածն գարնանին տեղն ալ պիտի բռնէ։ Այլ սակայն այս առատութեան նշաններ չենն կրած ցորենի գինը չատ պակասցնել, զի մէջտեղ բնաւ ցորեն չը կայ այժմ և մինչև հունձի ատեն որ ամիս ու կէս կը տևէ, ինչով պիտի ապրի խեղճ ժողովուրդը...Հանապարհներու գիւրութիւններ ալ չը կան որ ուրիշ հեռաւոր քաղաքներէ ցորեն փոխադրուի վանս։ Թուրք կառավարութիւնն ալ այդ փոխադրութիւններու առջև դժուարութիւններ և արգելքներ կը հանէ։ Նաև, քիրդ և թուրք աւարգակաց խումբեր կը յարձակին հայոց արտերուն վրա և ալարացները (չը հասունցած ցորենի ծիլեր) կը կերցուենն իրենց անասուններուն։ Ասկէ զատ, ճանապարհորդներ կը կողոպտեն և կը սպանենն։ Երկու չաթաթ առաջ Վանէն Կ. Պոլիս գնացող Թուրքական փոստը կողոպտեր էին։ Հայեր բարձրաշնորհ պատրիարքին հեռագրեցին այստեղի սոսկալի վիճակը և չորս օր առաջ պատրիարքէն հեռագիր եկաւ Խրիմեան հայրիկին թէ պատրիարքն անձամբ գնացել է սուլթանի մօտ և յայտնել է Վանի սարսափելի դրութիւնը։ Սուլթանը խոստացեր է քրիստոնեաներէ և իսլամներէ բաղկացած մի մասնաժողով անմիջապէս ղրկել Վան, որպէս զի այնտեղ ապահովութիւն և բարեկարգութիւն մտցուենն. սուլթանի թիկնապահներէն (ադիւտանտ) երեք անձ պիտի ընկերանան այդ մասնաժողովին։ Բայց մենք չենք կարող յոյս մը դնել այս մասնաժողովին վրա, զի թէ Բ. Դուռը կամենար ապահովութիւն և բարեկարգութիւն հաստատել այստեղ, նոյն բանը կարող էր անել արդէն եկած կայսերական կօմիսարներու, Եուսուֆ-փաշայի և Ազարկեան Սարգիս էֆէնդիի միջոցով, որոնց ղրկված տեղեկագիրները և ծրագիրները (պրօէկտ) զրեթէ միշտ անպատասխան թողած է Բ. Դուռը։

Կը մխիթարվինք գոնէ մտածելով որ երբ այսպիսի քանի մը մասնաժողովներ գան և ոչինչ չը գործեն, ալ ժամանակը եկած կը լինի եւրոպական միջազգային մասնաժողով մը այստեղ գայու և մինչև որ այդպէս չը լինի, երբէք յոյս չը կայ որ ապահովութիւն և բարեկարգութիւն մտնենն Հայաստանի մէջ։

«Պաչիա 25 (յունիս 6) կիրակի օր, ազգային սամմանադրութեան տարեդարձի հանդէսը կատարվեցաւ սուրբ Գրիգորի վանքին դաշտավայրը, ծառաւէտ և չատ սիրուն տեղ մը, որ Այգեստանէն մէկ ու կէս ժամի չափ հեռու է։ Նամանդաստ փաչան և Սամիհ փաչան ներկայացած էին արգելել այս հանդէսը, բայց ժողովուրդը մտիկ չըրաւ և ցոյց տուաւ թէ ոչ ահեղի սովը, ոչ թուրք կառավարութեան սպառնալիքները և ոչ բնակեանց դժուարութիւնները (այն օրը սաստիկ անձրև եկաւ) կրցած էին հանդիսեցնել Վանի հայոց ազգային եռանդը։

Հանդիսականներէն չատեր անձրևոցներով (օմբրէլա) եկած էին այդ մէկ ու կէս ժամուան տեղը, որ ոտքով երկու ժամէն կարելի է երթալ, ատենարանութիւններ լսելու և հանդէսը չքեղացնելու համար։ Ատենաբաններուն մէջ էր նաև ռուսական փոխ-հիւպատոս վսեմ. կամսարական բէկ, որ հայերէն լեզուով յայտնեց իւր ուրախակցութիւնը և գովեց հայոց ազգասիրութիւնը։ Նամանդաստ փաչային օգնական (մուավին) վսեմ. Աղաթոն էֆէնդին ալ մի ճառ կարդաց, որով հայոց պարկեշտութիւնը գովեց և ըսաւ թէ այս տարուան հանդէսը նախորդ տարուան հանդէսէն գերազանց է, զի այս տարի սամմանադրութիւնը գործադրուած է, մինչդեռ անցած տարի նորա անունը միայն կար Վանի մէջ։ Մինչև ատենախօսները էին հայկական վարժարանէն և Վարագի վանուց գիշերօթիկ վարժարանէն մէկ մէկ աշակերտ, Հայրենասէր ընկերութեան նախագահ պ. Մ. Թէրլէմեզեան, Արարատեան վարժապետանոցի սանէրն պ. Գ. Նաթանեան, և պ. պ. Տիգրան Ամերճանեան, Մ. Նաթանեան և Մ. Փորթուգալեան։ Ներկայ էր նաև վսեմ. Աղաբէկեան Սարգիս էֆէնդին։ Թէ առաջա հանդիսավարը գնացած և թէ երեկոյին Այգեստան վերադարձած ժամանակ՝ ժողովրդին առաջէն կերթային նուագածուներ, որոնց կը յաջորդէին երգեցիկ պատանեակներ։ Պարզուած էին նաև չորս գրոշակներ, որոնց վրայ գրուած էր «Լեցուց վեհապան սուլթան Համիդ խան», «Լեցուց ազգային սամմանադրութիւնս», «Լեցուց Արարատեան ընկերութիւնս», «Լեցուց Հայրենասէր ընկերութիւնս», ձայներով չը տրուեցաւ դէ տեսնուեցաւ որ այս սովի ժամանակ չատ դըժար պիտի լինէր այդ։ Ցոմանների գինը մէկ արծաթ մէջիդէն (մէկ ու կէս ռուբլի) իջեցուցին ութ զուրուշի (քառասուն կոպէկ)։ Հանդիսին նախագահն էր Խրիմեան հայրիկ, բայց նոյն օրը վարագէն եկած ժամանակ կէս ճանապարհին վրա չատ սաստիկ անձրևի բռնուելը և չէր կրցեր յաջողանալ։ Այս հանդէսը կատարեց Հայրենասէր անուն ընկերութիւնը, որուն օգնեց Երուանդեան Ցէր-Դարուտան Հայրը։ Բացի այս քանանչէն, ոչ մի եկեղեցական չէր եկած տարեդարձի հանդիսին։

Թէ ճանապարհին վրայ և թէ հանդիսավայրին մէջ ժողովուրդը երբեմն երբեմն հրացան կարձակէր։ Այգեստան վերադարձած ժամանակ, ժողովուրդը գնաց Խրիմեան հայրիկի տան առջև և կեցցէներ պօռալով համակրութեան ցոյցեր ըրաւ։ Այն տեղէն գնաց անգլիական և ռուսական փոխհիւպատոսարանները առջև և երգեր երգելով, կեցցէներ պօռաց Անգլիոյ վեհափառ թագաւորին, Նորընծայ պաշտօնէութեան և պ. Կէյտոսի համար։ Նոյնպէս և ռուսաց մեծազօր Ալէքսանդր Կայսեր, Լորիս-Մելիքովի և Կամսարական բէկի համար։ Այս միջոցին հրացանձիներով կը զատարկէին ի պատիւ այդ անուններու։

Վսեմ. Կամսարական բէկ արդէն մի անգամ ճաշ տուած էր 4000-ի մօտ սովածներու, դարձեալ նոյնչափ սովածներու ճաշ պիտի տայ առաջիկայ հինգշաբթի, Համբարձման տօնի օրը։ Վանի մէջ հայ մը չը կայ որ չօրհնէ Կամսարկանի անունը. նա ոչ թէ կը սիրուի, այլ կը պաշտուի ժողովրդէն։

Հրանտ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Голосъ» լրագրին գրում են Լօնդոնից։ Այստեղ չատ զբաղած են Թիւրքայ կառավարութենից Հայաստանի վերաբերութեամբ։ Այդ թիւռաա նամանգը երկիր խոսակցութեան առարկայ էր լորդերի ժողովի մէջ։ Բոլոր կուսակցութիւնները համաձայն են, որ Հայաստանի դրութիւնը այնքան վատ է, որ ոչինչ յոյս չը կայ նրան բարւոքելու, մինչև որ կառավարութեան ձեր չը փոխվի այդ երկրի մէջ։ Բ. Դուռը խոստացաւ մասնաժողով նշանակել, բայց ասենները գիտեն թէ ինչ են նշանակում թիւրքայ խոսքերը։

—«Temps» լրագրին Բերլինից հեռագրում են որ Բալխանացի մի հանգուցեալ պատգամաւորի տեղ մի ուրիշ պատգամաւոր ընտրելու ժամանակ, Բերլինի փողոցների մէջ անպայտ մարդիկների ձեռքով կախվեցան սոցիալիստական պրոկլամացիաներ, որոնց մէջ ասված էր, թէ Գերմանիան ոչինչ չունի սպասելու հետզհետէ և յաջորդական վերանորոգութիւններից, այլ հարկաւոր է մի յեղափոխութիւն գործել, ոչնչացնել եղած քաղաքական կարգերը և յայտնել հանրապետութիւն։

—Լօնդոնի լորդերի պալատում կարնարվոն հայոց խնդիրը պաշտպանեց և ասեց որ այժմ անհրաժեշտ է Հայաստանում վերանորոգութիւններ մտցնել։ Հարկաւոր է, ասեց կարնարվոն, նշանակել մի քրիստոնեայ նահանգապետ Հայաստանում, Դուքս Արգայլ մեղադրեց Պալիսբիրիին, որ նրա միխիտարութիւնը այն վնասը բերեց, որ երկպառակութիւն մտցրեց եւրոպական պետութիւնների միմեանց մէջ։

—«Times» լրագիրը լորդ Կարնարվոնի կողմն է բռնում հայոց խնդրի վերաբերութեամբ և ասում է թէ հարկաւոր է չուտով արմատական բէֆորմներ մտցնել Հայաստանում։ Անգլիական լրագիրը բանակում է Պալիսբիրիի դէմ, ապացուցանելով որ Հայաստանի թշուառութիւնը հետևանք է վատ կառավարութեան և որ կարելի է հեռացնել այդ վատ հետևանքները եւրոպական պետութիւնների համաձայն պահանջներով Բ. Դռնից, որ խոստացած բէֆորմները կատարվին, դատաստանական և կառավարական մասում, վերանորոգութիւնները մտցնվեն հարկանութեան մէջ և հաստատվի ժանդարմների գունդ։

—Լօնդոնի Պիտի թատը առաջարկեց յունական թագաւորին Լօնդոնի պատուոր քաղաքացու տիտղոսը։

—Լօնդոնից լրագիրներին հեռագրում են, յունիսի 5-ին (17) հետևեալը. «Ապրիլի 27-ից ուղարկված հեռագրի մէջ պ. Լայարդը յայտնում է, որ սուլթանը զրգռված է Ազգիայի դէմ։ Լայարդի խօսքերին նայելով, հիւպատոսների տուած տեղեկութիւնները ապացուցանում են, որ թիւրքայ կայսրութիւնը դեռ ես այդպիսի քայքայված և կրիտիկական դրութեան մէջ չէ գտնվել։ Լայարդի առաջարկութիւններին սուլթանը միշտ խոստմանդներով էր պատասխանում, և երբէք չէր կատարում։ Սուլթանի և նրա խորհրդականների քաղաքականութիւնը, ինչպէս ասում է Լայարդ, կայանում է նրա մէջ, որ գործեն առանց Եւրոպայի և նրա հակառակ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՈՒՆԻ